928 Եկե՛ք, բոլոր ճամփորդներ,

1. Եկե՛ք, բոլոր ճամփորդներ,
Այս աշխարհի անցորդներ (2),
Նա էլ ձեզ հետ է այստեղ,
Խաչյալ Փրկիչ Հիսուս Տեր (2)։
Փշից պսակ հյուսեցին,
Ձեռքս ու ոտքս ծակեցին (2),
Խաչափայտին գամեցին,
Ծորերս բաժանեցին (2)։

2. Նախատինքը ինձ պատեց,
Ցավը իմ սիրտը կոտրեց (2),
Ցավակցող էլ չունեցա,
Ցավերիս մեջ ես մեռա (2)։
Աստծուց ես օրհնվեցի,
Բարեկամից մերժվեցի (2),
Լեզուս քիմքիս է կպած,
Ջրիս լեղի է խառնած (2)։

3. Քեզ համար չարչարվեցի,
Մեղքերդ ինձ վրա վերցրի (2),
Խաչի վրա գամվեցի,
Քեզ թողություն բերեցի (2)։
Նայի՛ր ինձ ու հավատա՛,
Մեղքերիդ համար զղջա՛ (2),
Խաչի մոտ դու խոնարհվի՛ր,
Իմ արյունով սրբվի՛ր (2)։